https://doi.org/10.46991/hc.2024.21.2.120

Historical and Cultural Heritage of Shirak Region of the RA as a Stimulus for Tourism Development and Analysis of Tourism Development Opportunities in the Region

Marine Gevorgyan
https://orcid.org/0000-0002-3569-4132
PhD, Associate Professor at YSU Chair of History of Armenia
marine.gevorgyan@ysu.am

Gayane Tovmasyan
https://orcid.org/0000-0002-4131-6322
PhD in Economics, Associate Professor, Senior Researcher at Amberd Research Center of ASUE,
Lecturer at the Public Administration Academy of the RA
Lecturer at Yerevan State University
tovmasyangayane@yahoo.com

Keywords: tourism, touristic resources, historical and cultural heritage, Shirak region, Gyumri, Arpi Lake National Park, marketing, tourist route, SWOT analysis.

Shirak is one of the ten regions of the RA and is located in the northwest of the Republic. The region has rich historical and cultural heritage, a number of interesting museums, delicious national cuisine, favorable conditions for the development of ecological, winter and urban tourism. Historical, descriptive, statistical and SWOT analysis methods were used for the comprehensive analysis of tourism problems in the region. The article examines the main tourism resources of the region: historical, cultural, religious, ecological, gastronomic, winter, urban, etc. The main socio-economic indicators of the region, tourism infrastructure and the current state of tourism in the region were also presented. Some recommendations were processed: development of new tourist routes, inclusion of already popular or little-known monuments in tourist routes, improvement of marketing activities, organization of new festivals, etc.

ՀՀ Շիրակի մարզի պատմամշակութային ժառանգությունը որպես զբոսաշրջության զարգացման խթան եվ մարզում զբոսաշրջության զարգացման հնարավորությունների վերլուծությունը

History and Culture Vol.-21(2), 2024, pp. 120-135.

Received: 09.09.2024
Revised: 06.10.2024
Accepted: 22.11.2024

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2024

Մարինե Գևորգյան
պ.գ.թ., ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի դոցենտ

Գայանե Թովմասյան
տ.գ.թ., դոցենտ, ՀՊՏՀ Ամբերդ հետազոտական կենտրոնի ավագ հետազոտող,
ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի դասախոս
ԵՊՀ Աստվածաբանության և հայ եկեղեցու պատմության ամբիոնի դասախոս

Հիմնաբառեր՝ Զբոսաշրջություն, զբոսաշրջային ռեսուրսներ, պատմամշակութային ժառանգություն, Շիրակի մարզ, Գյումրի, Արփի լիճ ազգային պարկ, մարքեթինգ, զբոսաշրջային երթուղի, SWOT վերլուծություն:

Շիրակի մարզը ՀՀ տասը մարզերից մեկն է և ընկած է հանրապետության հյուսիս-արևմուտքում: Մարզն ունի հարուստ պատմամշակութային ժառանգություն, մի շարք հետաքրքիր թանգարաններ, համեղ ազգային խոհանոց, էկոլոգիական, ձմեռային և քաղաքային զբոսաշրջության զարգացման նպաստավոր պայմաններ: Մարզի զբոսաշրջության հիմնախնդիրների համապարփակ վերլուծության նպատակով օգտագործվել են պատմական, նկարագրողական, վիճակագրական և SWOT վերլուծության մեթոդները: Հոդվածում ուսումնասիրվել են մարզի հիմնական զբոսաշրջային ռեսուրսները՝ պատմամշակութային, կրոնական, էկոլոգիական, գաստրոնոմիական, ձմեռային, քաղաքային և այլն: Ներկայացվել են մարզի հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշները, զբոսաշրջային ենթակառուցվածքները, վերլուծվել է զբոսաշրջության առկա վիճակը մարզում: Մշակվել են առաջարկություններ՝ նոր զբոսաշրջային երթուղիների մշակման, արդեն հանրահռչակված կամ քիչ հայտնի հուշարձանների՝ զբոսաշրջային երթուղիներում ներառման, մարքեթինգային գործունեության բարելավման, նոր փառատոնների կազմակերպման և այլ ուղղություններով:

Историко-культурное наследие Ширакской области РА как стимул развития туризма и анализ возможностей развития туризма в регионе

Марине Геворкян
к.и.н., Доцент кафедры История Армении Ереванского государственного университета

Гаяне Товмасян
к.т.н., доцент, старший исследователь ИЦ «Амберд» АГЭУ,
Преподаватель Академии государственного управления РА
Преподаватель Ереванского государственного университета

Ключевые слова: Туризм, туристические ресурсы, историческое и культурное наследие, Ширакская область, Гюмри,

Historical and Cultural Heritage of Shirak Region of the RA as a Stimulus for Tourism Development and Analysis of Tourism Development Opportunities in the Region

ՀՀ Շիրակի մարզի պատմամշակութային ժառանգությունը որպես զբոսաշրջության զարգացման խթան եվ մարզում զբոսաշրջության զարգացման հնարավորությունների վերլուծությունը

Национальный парк озера Арпи, маркетинг, туристический маршрут, SWOT-анализ.

Ширак является одним из десяти регионов РА и расположен на северо-западе республики. Регион имеет богатое историческое и культурное наследие, ряд интересных музеев, вкусную национальную кухню, благоприятные условия для развития экологического, зимнего и городского туризма. Для комплексного анализа туристических проблем региона были использованы методы историко-описательного, статистического и SWOT-анализа. В статье рассмотрены основные туристические ресурсы региона: исторические, культурные, религиозные, экологические, гастрономические, зимние, городские и др. Также были рассмотрены основные социально-экономические показатели региона, туристическая инфраструктура и современное состояние туризма в регионе. Были разработаны рекомендации: разработка новых туристических маршрутов, включение в туристические маршруты уже популярных или малоизвестных памятников, совершенствование маркетинговой деятельности, организация новых фестивалей и т.д.

* * *

Ներածություն: Շիրակի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևմուտքում: Այն արևմուտքից պետական սահմանով սահմանակից է Թուրքիային, իսկ հյուսիսից՝ Վրաստանին, արևելքից սահմանակից է Լոռու և հարավից՝ Արագածոտնի մարզերին: Արարատի մարզի տարածքը 2680 քառ. կմ է, բնակչությունը 2023 թ. դրությամբ կազմել է 230.5 հազար մարդ: Մարզում կա 3 քաղաք, 127 գյուղ [ՀՀ մարզերի և Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական բնութագրերը, Շիրակի մարզ, 359-360]:

Զբոսաշրջությունն էական նշանակություն ունի ՀՀ տնտեսության մեջ և կարող է նպաստել տնտեսական աճին, զբաղվածության ավելացմանը և այլն [Tovmasyan, 2022, 83-98]: Այս տեսանկյունից կարևորվում է մարզերում պատմամշակութային և այլ զբոսաշրջային ռեսուրսների վերլուծությունը, որոնց հիման վրա հնարավոր է զարգացնել զբոսաշրջության տարբեր տեսակները: Մարզի հիմնական զբոսաշրջային դեստինացիաներից են՝ Գյումրին, Հառիճավանքը, Մարմաշենը, Արփի լիճ ազգային պարկը և այլն:

Սույն հոդվածում ներկայացվել են Շիրակի մարզի պատմամշակութային ժառանգության հիմնական օբյեկտները, բնության հատուկ պահպանվող տարածքները և այլ զբոսաշրջային ռեսուրսներ, իրականացվել է մարզի սոցիալ-տնտեսական և զբոսաշրջության զարգացման վերլուծություն, ներկայացվել են զբոսաշրջային առկա և առաջարկվող երթուղիները: Իրականացվել է նաև մարզի զբոսաշրջության զարգացման SWOT վերլուծությունը, որը բացահայտում է մարզում զբոսաշրջության զարգացման ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև առկա սպառնալիքներն ու հնարավորությունները, ինչի հիման վրա մշակվել են մի շարք առաջարկություններ:

Շիրակի մարզի պատմամշակութային ժառանգությունը և դրա կիրառման հնարավորությունները զբոսաշրջային երթուղիներում

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
Մասշտաբ 1:650 000
Գյումրի
Ախուրյան
Դավիթ
Ազատան
Ջրաբատ
Լուսակերտ
Գեղանիստ
Եփրակավան
Իսահակյան
Հայրենյաց
ԱՐԹԻԿ
Բարձրաշեն
Դառին
Աղին
ՄԱՄԱԼԻԿ
Ղեմզաշեն
Ջորակաց
Քարաբերդ
Վահանաձորյուր
Ցիթեանքով
Լանջիկ
Նիրշեն
Անիավան
Ասլանոպլու
Ոսկեհասկ
Օղուզլու
Ալաստրայի լիճ
Ալեքսանդրապոլ
Լենինական
Մարմաշեն
Սպիտակ
Ջաջուռ
Էրիկ
Քեթի
Կասաբ
Վահրամաբերդ
Լուսաձորյուր
Կաքավասար
Ամասիա
Վարդաձորյուր
Ալագյազ
Կրասար
Զարիշատ
Դրիզակ
Գեղաքաղաք
Ալվար
Աշոցք
Ղաղակն
Ջորակերտ
Եղնաջուր
Սիզավետ
Բավրա
Վարազդուղ
Կարմրաձոր
Կարմրաշատ
Ամուրի գետ
Ախուրյան գետ
Ալագյազ գետ
Ռազդան գետ
Գեղարքունիք լիճ
Սևանա լիճ
Մեծ Եղնախաչ լ.
Փոքր Եղնախաչ լ.
Ամասիայի լիճ
Ասլանի լիճ
Ալագյազ լ.
Ղարաբուրուն լ.
Ղարաբուրուն գետ
Ասլանի գետ
Ամասիայի գետ
Ալագյազ գետ
Ռազդան գետ
Գեղարքունիք լիճ
Սևանա լիճ

ընդունելուց հետո փոխել էր իր անունը Ալեքսանդրայի: 1924 թ. բոլշևիկների օրոք Ալեքսանդրապոլը վերանվանվել է Լենինական, իսկ 1992 թ.՝ Գյումրի:

Շիրակի մարզի ներկայիս տարածքը, որը ձևավորվել է ՀՀ ԳԽ կողմից 1995 թ. նոյեմբերի 7-ին ընդունված «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքով [ՀՀ օրենքը «Վարչատարածքային բաժանման մասին», 1995] զբաղեցնում է Աշոցքի գոգավորությունը, Շիրակի սարահարթը և Արագածի լեռնազանգվածի հյուսիսհայաց լանջերը, կազմում է պատմական Շիրակ գավառի արևելյան մասը: Մարզը ներկայումս ներառում է հինգ ենթաշրջաններ՝ Ախուրյանի, Արթիկի, Անիի, Ամասիայի և Աշոցքի՝ ընդգրկելով Ախուրյանի գետի վերնագավառը և գետի միջին հոսանքի ձախափնյա ավազանը: Մարզում կա 6 համայնք, 3 քաղաք, 127 գյուղ: Մարզկենտրոնը Գյումրի քաղաքն է [Մանուկյան, 2013, 767]:

Շիրակի մարզն աչքի է ընկնում զբոսաշրջային-ռեկրեացիոն ռեսուրսներով: Այդպիսիք են մոտ 30 զբոսաշրջային ռեսուրսներ, որոնց շարքում են Վահրամաբերդի ուրարտական ամրոցը, Մարմաշենի և Հառիճի վանքերը, Լմբատավանքը, Երերույքի տաճարը և այլն: Զբոսաշրջային գրավչությամբ աչքի է ընկնում Գյումրի քաղաքը՝ իր ճարտարապետական բազմաթիվ կառույցներով, եկեղեցիներով, թանգարաններով, արհեստագործության և արվեստի ոլորտի օբյեկտներով: Բացառիկ դեր ունեն Շիրակի բնածին ռեկրեացիոն ռեսուրսները՝ մաքուր օդը, գեղատեսիլ վայրերը, լեռնատափաստանային լանդշաֆտները, կազդուրիչ կլիման, ձմեռային սպորտաձևերի ու հանգստի կազմակերպման բացառիկ հնարավորությունները և այլն [Պոտոսյան, 2022, 411-422]:

Շիրակի մարզի պատմամշակութային ժառանգության ներառումը զբոսաշրջության ոլորտ մեր երկրի համար անչափ կարևոր է, ուստի այստեղ ներկայացնենք պատմամշակութային հուշարձաններից մի քանիսը:

Արքայաբլուր ամրոց: Գուսանագյուղի սահմաններում պահպանվել են նախնադարյան, նախաքրիստոնեական ու քրիստոնեական շրջաններին պատկանող հուշարձաններ: Գյուղում պահպանվել է դղյակի ավերակները, որն ըստ ճարտարապետ Թ.Թորամանյանի, կառուցվել է 10-12-րդ դդ.՝ Ք.ա. 3-2-րդ հազարամյակների կիկլոպյան ամրոցի տեղում: Գյուղի տարածքում պահպանվել են նաև 11-րդ դարում կառուցված եկեղեցին, ուրարտական Ղալա բերդը, կիկլոպյան երկու ամրոցների ավերակները, Ք.ա. 2-1-ին հազարամյակների «Արքայաբլուր», «Բերդալանջ», «Արքայից» կիկլոպյան ամրոցները, 12-13-րդ դարերի թվագրությամբ խաչքարեր [Մանուկյան, 2013, 827]:

Սև բերդը Գյումրի քաղաքում 1834 թ. կառուցված ամրոց է: Պեղումների արդյունքում պարզվել է, որ այն քաղաքի ամենահին բնակելի հատվածն է: Առաջին ուսումնասիրություններն այստեղ կատարվել են 19-րդ դարի երկրորդ կեսին՝ մոտ 1875 թ.: Հետագայում պեղումներ իրականացրել է նաև Կումայրի արգելոցի արշավախումբը: Պեղումների ժամանակ գտնվել են մի փոքր բնակավայր՝ սրբատեղիով, փոքր արձան, ցլիկ, անտիկ ժամանակաշրջանի դամբարանադաշտ [ՀՀ Շիրակի մարզի 30 զբոսաշրջային տարածքներ]:

Շիրակի մարզը հարուստ է նաև իր եկեղեցիներով ու վանքերով:

Սուրբ Աստվածածին եկեղեցին, որը գտնվում է Գյումրիում, հայտնի է նաև որպես «Յոթ Վերք», 19-րդ դարում կառուցված եկեղեցիներից է: Եկեղեցին գործել է նաև խորհրդային տարիներին: 1988 թ. ավերիչ երկրաշարժից հետո 2 գմբեթներ ընկել են ու փոխարինվել նորով: Ընկած գմբեթները գտնվում են եկեղեցու բակում (ՀՀ Շիրակի մարզի 30 զբոսաշրջային տարածքներ): Եկեղեցում գտնվող Յոթ Վերք պատկերը կարևոր նշանակություն է ունեցել ոչ միայն Շիրակի, այլև հայոց հոգևոր, կրթական ու հասարակական կյանքում [Աբրահամյան, 2017, 91]:

Մարմաշենի ճարտարապետական համալիրը գտնվում է Ախուրյանի տարածաշրջանի Վահրամաբերդ գյուղի հարավ-արևմտյան մասում: Այն Բագրատունյաց ժամանակաշրջանի լավագույն հուշարձաններից է, որը բաղկացած է 4 եկեղեցիներից, գավթից, մատուռից և խաչարձաններից [Թորամանյան, 1942, 315-318]: Գլխավոր եկեղեցին, ըստ արձանագրության, կառուցել է Վահրամ Պահլավունին 986-1029 թթ.: Մարմաշենի վանքը եղել է Հայաստանի կրոնական ու մշակութային նշանավոր կենտրոն, այն հայկական հոգևոր և ճարտարապետության արժեքավոր համալիրներից է (ՀՀ Շիրակի մարզի 30 զբոսաշրջային տարածքներ):

Հառիճավանքը Հայաստանի հոգևոր կենտրոններից և ուսումնա-կրթական նշանավոր օջախներից մեկն է եղել: Ս. Գրիգոր եկեղեցին իր ճարտարապետական ու կառուցողական ձևերով խիստ բնորոշ է 7-րդ դարին: Իվանե ու Զաքարե եղբայրներն այստեղ կառուցել են գմբեթավոր սրահի տիպին պատկանող գլխավոր եկեղեցին (1201 թ.): Փոքր-ինչ ավելի ուշ կառուցվել է Հառիճավանքի ժամատունը: Վանքի հիմնական խմբից հարավ պահպանվել է մի մատուռ [Հայ ժողովրդի պատմություն, 1976, 913]: Վանական համալիրի տարածքում եղել են նաև վանական միաբանության բազմաթիվ կացարաններ ու մի շարք այլ քաղաքացիական ու տնտեսական շինություններ, համալիրն ունեցել է իր առանձին գերեզմանոցը [Եղիազարյան, 1975, 14-19]:

Լմբատավանքը գտնվում է Արթիկ քաղաքից 1,5-2 կմ հարավ-արևմուտք, բարձունքի լանջին՝ Լմբատ թաղամասում: Տարբեր ժամանակներում արթիկցիները տարբեր կերպ են անվանել Լմբատավանքը՝ Լմպատի վանք, Կարմիր վանք, Հրաշագործ վանք, Ս. Ստեփանոս եկեղեցի: Լմբատավանքի վանական համալիրում պահպանվել է միայն Ս. Ստեփանոս եկեղեցին: Լմբատավանքը Թ. Թորամանյանը թվագրում է 7-րդ դարով: Այն խաչաձև, գմբեթավոր եկեղեցի է, որը հարուստ է հիմնականում 11-13 դդ. նվիրատվական արձանագրություններով, սակայն շինարարության մասին տեղեկություններ չկան: Լմբատավանքը հարուստ է գեղեցիկ որմնանկարներով, որոնք զբաղեցնում են ավագ խորանի գմբեթարդը և դրան հարող արևելյան ու արևմտյան պատերը: 2013 թվականին որմնանկարների վերականգնման համար Հայաստան են այցելել իտալացի մասնագետ Քրիստին Լամուղեն և ճարտարապետ Արա Զարյանը, ովքեր ավարտին են հասցրել որմնանկարների վերականգնման ու ամրակայման աշխատանքները: Լմբատավանք ուխտավորներ են գալիս ոչ միայն Արթիկից, Գյումրիից, այլև Հայաստանի տարբեր վայրերից [Լմբատավանք (Լմպատի Վանքի Սբ Ստեփանոս Եկեղեցի), Տարեգիրք, 2017, 217-219]:

Երերույքի բազիլիկը կամ Սբ. Կարապետ վկայարանը հայկական վաղմիջնադարյան կարևորագույն հուշարձաններից է: Երերույքի տաճարը հիմնվել է քրիստոնեական վաղ շրջանում՝ 4-5-րդ դարերում: Այն կառուցված է Անիի բաց նարնջագույն տուֆից: Պահպանվել է կիսավեր վիճակում: Երերույք անվանումն առաջացել է մատաղ անելու հեթանոսությունից մնացած սովորությունից: Իր տեսակի մեջ համարվում է Հայաստանի հնագույն եկեղեցիներից մեկը [Աղասյան, Հակոբյան, Հասրաթյան, Ղազարյան, 2009, 53-54]: Եկեղեցին կանգնած է բազմաստիճան

հիմնապատվանդանի վրա, եռանավ է, ունի կիսաշրջան խորան և երկու ուղղանկյուն ավանդատներ, արևմտյան երկու անկյուններին սենյակներ կան և արտաքին սյունասրահներ: Երերույքի բազիլիկի քանդակային հարդարանքը շատ համեստ է ինչպես ներսի, այնպես էլ դրսի ձևավորման մեջ [Հակոբյան, 2016, 40-41]:

Շիրակի մարզում զբոսաշրջիկների վրա առավել մեծ տպավորություն է գործում Հին Գյումրին, ինչպես նաև մարզում գտնվող թանգարանները:

«Կումայրի» պետական պատմաճարտարապետական արգելոց-թանգարանը հիմնվել է 1980 թ. և ընդգրկում է Գյումրի քաղաքի պատմական միջուկը: Արգելոց-թանգարանի պահպանման տարածքը կազմում է մոտ 1000 հա, որում ընդգրկված են պատմության ու մշակույթի ավելի քան 1100 հուշարձաններ: Ներկայումս Գյումրի քաղաքի պատմական միջուկում ընթանում են վերականգնման աշխատանքներ (ՀՀ Շիրակի մարզի 30 զբոսաշրջային տարածքներ): Առաջին հերթին այն պետք է ներկայացնի տեղական ավանդույթները, խոհանոցը, արհեստները, մարզում ապրող ստեղծագործ մարդկանց, պատմությունը: Գյումրի քաղաքը միշտ ունեցել է և ունի միայն իրեն բնորոշ կոլորիտ: Մարզում են ծնվել Ավետիք Իսահակյանը, Հովհաննես Շիրազը, Մհեր Մկրտչյանը, Արմեն Տիգրանյանը, Գուժ Մանուկյանը, Սերգեյ Մերկուրովը և այլք: Հին Գյումրու վերականգնումը ունակ է Գյումրին դարձնելու հանրապետության զբոսաշրջային առաջնային ուղղություններից մեկը: Գյումրի ժամանող յուրաքանչյուր զբոսաշրջիկ պետք է հնարավորություն ունենա ծանոթանալու քաղաքի պատմությանն ու մշակույթին [ՀՀ Շիրակի մարզի զբոսաշրջության զարգացման հայեցակարգ, 2018, 6-8]:

Մինաս Ավետիսյանի տուն-թանգարանը հիմնադրվել է 1982 թվականին՝ նկարչի ծննդավայր Ջաջուռ գյուղում: 1988 թ. երկրաշարժից շենքն ավերվում է, այնուհետև վերաբացվում է 2003 թ.: Այժմ թանգարանում ցուցադրվում են նկարչի և նրա ժամանակակիցների աշխատանքները [Մինաս Ավետիսյանի թանգարան]:

«Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահում» պահվում են քույրերի գեղանկարչական, գրաֆիկական, խեցեգործական, աշխատանքների ամբողջական հավաքածուն: Պատկերասրահը գործում է 1987 թ. ու այստեղ պահպանվում են քույրերի կողմից նվիրատված մոտ 620 բնօրինակ աշխատանքներ: Պատկերասրահի շենքը 19-րդ դարի Ալեքսանդրապոլյան ճարտարապետության վառ օրինակ է՝ իր մեջ ներառելով այն ժամանակի եվրոպական ու ավանդական հայկական ճարտարապետության տարրերը: Շինությունը 1980 թ. ներառվել է «Կումայրի արգելոց թանգարան»-ի մեջ՝ անցնելով պետության կողմից պահպանվող պատմամշակութային ժառանգության կառույցների ցանկը [Ասլամազյան քույրերի պատկերասրահ]:

Զիթողցոնց տուն-թանգարան: Ժամանակին գյումրեցի հարուստ վաճառականի տունն այսօր դարձել է ամենագրավիչ ու ամենաշատ այցելվող թանգարանը Գյումրիում, որը կոչվում է Զիթողցոնց տուն-թանգարան: Թանգարանը հին առանձնատուն է, տների հավաքածու, որը կապ ունի և՛ Գյումրու պատմության, և՛ ամենօրյա կյանքի հետ, Թանգարանի հավաքածուն ներառում է

ժամանակակից արվեստի ստեղծագործություններ, գորգեր և ձեռագործ իրեր Գյումրուց [ՀՀ Շիրակի մարզի 30 զբոսաշրջային տարածքներ]:

Մեր Մկրտչյանի տուն-թանգարանը հիմնադրվել է 2004 թ. Գյումրիում: Թանգարանի նպատակն է ծանոթացնել այցելուներին արտիստի կյանքին ու անցած ուղուն: Ամենասիրված նմուշներից են կամոդը՝ «Մեր մանկության տանգոն» ֆիլմից, և գալիկոնը՝ «Նվագախմբի տղաները» ֆիլմից, որոնք այցելուները շատ են գնահատում: Առկա են նաև բազմաթիվ լուսանկարներ, գրքեր ու անձնական իրեր՝ պատկերներ, նամակներ, փաստաթղթերի նմուշներ և այլն: Մեր Մկրտչյանի թոռնուհին՝ Իռեն Տերտերյանը, 2007 թ. թանգարանին է հանձնել դերասանի անձնական իրերից մոտ 1500 նմուշ, որոնք հարստացրել են թանգարանի հավաքածուն: Թանգարանում շատ են անցկացվում տարաբնույթ միջոցառումներ [Մեր Մկրտչյանի թանգարան]:

Հովհաննես Շիրազի հուշատուն-թանգարանը գործում է 2003 թ. սեպտեմբերից: Բանաստեղծի հիշատակը հավերժացնելու համար և ժառանգությունը պահպանելու նպատակով Հայաստանի Կառավարության որոշմամբ, Լենինականի տունը պիտի դառնար հուշ-թանգարան: Թանգարանում պահպանվում ու ցուցադրվում են Շիրազի անձնական իրերը, ձեռագրերը, տպագիր գործերը [Գյումրու համայնքապետարան]:

Ավետիք Իսահակյանի տուն-թանգարան: 1975 թ. հոկտեմբերին Իսահակյանների տունը դարձավ հուշատուն-թանգարան: Կարճ ժամանակաշրջանում այն դարձավ հանրապետության լավագույն թանգարաններից մեկը: Տարիների ընթացքում թանգարան այցած բազմաթիվ հյուրերի շարքում էին Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն, աշխարհահռչակ գրող Վիլյամ Սարոյանը, մարշալ Հովհաննես Բաղրամյանը և այլք: 1988 թ. աղետալի երկրաշարժը խոնարհեց նաև մեծ Վարպետի տունը: 2002 թվականին բանաստեղծի հուշատունը վերակառուցվեց [Գյումրու համայնքապետարան]:

Շիրակի մարզի զբոսաշրջային ակտիվները, հիմնական և առաջարկվող ուղղությունները, զբոսաշրջության զարգացման վերլուծությունը: Շիրակի մարզում զարգացման մեծ հեռանկարներ ունի էկոտուրիզմը: Այստեղ է գտնվում **Արփի լիճ ազգային պարկը**, որը ստեղծվել է ՀՀ կառավարության 2009 թ. ապրիլի 16-ի N 405-Ն որոշմամբ՝ Արփի լճի էկոհամակարգի, հազվագյուտ և չվող թռչնատեսակների բնադրավայրերի, Հայաստանի Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պահպանության նպատակով, տարածքը կազմում է 21179.3 հեկտար [ՀՀ կառավարության 25 սեպտեմբերի 2014 թվականի N 1059-Ա որոշումը Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին]:

Արփի լիճը գտնվում է Աշոցքի սարահարթում, Թուրքիայի և Վրաստանի սահմանին, ծովի մակարդակից 2023 մ բարձրության վրա: Արփի լճից սկիզբ է առնում Ախուրյան գետը: Արփի լճի ջուրն օգտագործվում է ոռոգման և էներգիա ստանալու համար: Ազգային պարկում՝ Արփի լճի հարևանությամբ, գտնվում է հայկական որորի ամենամեծ գաղութն աշխարհում: Սա նաև գանգրափետուր հավալուսնի միակ բնադրավայրն է Հայաստանում, գրանցված է ՀՀ Կարմիր գրքում: Ձմռանը լիճն ամբողջությամբ սառցակալում է: Լճի ափին է գտնվում Պաղակն բնակավայրը, որտեղ գրանցվել է ՀՀ ամենացածր ջերմաստիճանը (-46) [Արփի լիճ ազգային պարկ]:

Ազգային պարկի տարածքը ծածկված է տափաստաններով, մարգագետնատափաստաններով, մերձալպյան և ալպյան մարգագետիններով և ջրաճահճային տարածքներով: Տարածքին բարձր բնապահպանական նշանակություն է տալիս Հայաստանի, Հարավային Կովկասի և Կովկասի (էկոտարածաշրջանի) բազմաթիվ էնդեմիկ տեսակների առկայությունը: Ազգային պարկում աճում են մոտ 670 տեսակի բույսեր, որոնցից 25-ը ներառված են ՀՀ Կարմիր գրքում: Հանդիպում են 249 տեսակ ողնաշարավոր կենդանիներ, որոնցից՝ 12 տեսակի ձկներ (որից 1-ը գրանցված է ՀՀ Կարմիր գրքում), 3 տեսակի երկկենցաղներ, 10 տեսակի սողուններ (որից 2-ը գրանցված է ՀՀ Կարմիր գրքում), 193 տեսակի թռչուններ (որից 33-ը գրանցված է ՀՀ Կարմիր գրքում), 31 տեսակի կաթնասուններ (որից 4-ը գրանցված է ՀՀ Կարմիր գրքում) [Արփի լիճ ազգային պարկ]:

Շիրակի մարզում գտնվող Ախուրյան գետի վրա կառուցվել է արհեստական լիճ՝ ***Ախուրյանի ջրամբարը***՝ ՀՀ և Թուրքիայի սահմանագլխին: Մակերեսը կազմում է 54 կմ², ջրի ծավալը՝ 525 մլն մ³: Ոռոգում է Արագածոտնի, Արմավիրի և Շիրակի մարզերի հողերը [Հայաստանի ջրամբարները]:

Մարզում զարգացման մեծ հեռանկարներ ունի ***ձմեռային զբոսաշրջությունը***: Աշոցքը, որը հայտնի է իր ձյունառատ եղանակով, տարվա գրեթե կեսը ձյունածածկ է: Այստեղ գալիս են ձմեռային մարզաձևերի սիրահարները: Աշոցքում 2019թ. բացվել է դահուկային սպորտի կենտրոն [Աշոցքում ստեղծվել է դահուկային սպորտի կենտրոն]:

2024թ. փետրվարի 24-ին Շիրակի մարզի Ամասիա համայնքում կազմակերպվել էր «-46°C» ձմեռային փառատոնը՝ ձմեռային զբոսաշրջության զարգացման նպատակով, որին մասնակցել է 2500-3000 այցելու [Շիրակի մարզում կայացել է «-46 °C» ձմեռային փառատոնը]:

Շիրակի մարզն ունի համեղ ***ազգային խոհանոց*** և գաստրոնոմիական զբոսաշրջության զարգացման մեծ հեռանկարներ: Մարզի հայտնի ավանդական կերակրատեսակներից են՝ տավարի քյալան, խանգյալը, պասուց տոլման, հարիսան, պանրխաշը, յաղլին և այլն [Թովմասյան, 2020, 225]:

Շիրակը շատերին հայտնի է նաև այստեղ նկարահանված հայտնի ***ֆիլմերի*** միջոցով՝ Հին օրերի երգը, Եռանկյունի, Մեր մանկության տանգոն, Հեղնար աղբյուր, Տխուր փողոցի լուսաբացը, Վերադարձ ավետյաց երկիր, Կտոր մը երկինք, Ուրախ ավտոբուսը [Շիրակում նկարահանված ֆիլմերը]:

Տարբեր զբոսաշրջային գործակալությունների կողմից կազմակերպվող տուրերն ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ Շիրակի մարզի զբոսաշրջային գրավչություններից գործող տուրերում ընդգրկված են հետևյալ վայրերը՝ Գյումրին, Հառիճավանքը, Մարմաշենի վանքը [Արշավներ ակումբ տուր], երբեմն նաև Արթիկը և Լմբատավանքը [Նարեկավանք տուր], իսկ երկօրյա տուրերում վերոնշյալին ավելանում է նաև Երերույքը, Ախուրյանը, Ջրափին [Շիրակ երկօրյա տուր, Նարեկավանք տուր]:

Շիրակի մարզի զբոսաշրջային ներուժն ավելի ամբողջական ներկայացնելու համար անհրաժեշտ է նաև օգտագործել ***սահմանամերձ*** տարածքների գրավչությունը, պատմական և աշխարհագրական առանձնահատկությունները հետևյալ երթուղով՝ «Մարալիկ – Անիպեմզա –

Խարկով – Ախուրյանի ջրամբար – Իսահակյան – Շիրակավան – Գուսանագյուղ»՝ զարգացնելով ***սահմանամերձ զբոսաշրջությունը*** [Ավետիսյան, Գրիգորյան, Թովմասյան, 2021, 37-42]: Բացի այդ, մարզում *կարող են կազմակերպվել հետևյալ երթուղիները.*

- ✓ Արթիկ – Պեմզաշեն – Սառնաղբյուր – Լանջիկ,
- ✓ Հոռոմ – Հառիճ -Մանթաշի ջրամբար,
- ✓ Գյումրի,
- ✓ Գյումրի – Ախուրյան – Կառնուտ - Ջաջուռ – Ջաջուռի լեռնանցք,
- ✓ Գյումրի – Մարմաշեն – Վահրամաբերդ – Թորոսգյուղ – Հացիկ,
- ✓ Գյումրի – Արփի լիճ ազգային պարկ – Արավետ – Թավշուտ – Սիզավետ,
- ✓ Աշոցք [Ավետիսյան, Գրիգորյան, Թովմասյան, 2021, 153]:

Շիրակի մարզպետարանի կողմից մշակվել են տուրիստական երթուղիներ, իրականացվել է վերլուծություն մարզի 30 զբոսաշրջային տարածքների վերաբերյալ [ՀՀ Շիրակի մարզի 30 զբոսաշրջային տարածքներ], մշակվել են քայլարշավային [Քայլարշավային երթուղիներ] և հեծանվային երթուղիներ [Հեծանվային երթուղիներ], ինչպես նաև 2018թ. մշակվել է ՀՀ Շիրակի մարզի զբոսաշրջության զարգացման հայեցակարգ [ՀՀ Շիրակի մարզի զբոսաշրջության զարգացման հայեցակարգ, 2018]: Կա նաև պաշտոնական զբոսաշրջային տեղեկատվական կայք՝ Travel Gyumri, որը ներկայացնում է Շիրակի զբոսաշրջային դեստինացիաները [Travel Gyumri]:

MyArmenia ծրագրի ֆինանսավորմամբ 2021թ. հիմնադրվել է Shirak Tourism Management Office ՀԿ-ն, որը հանդես է գալիս որպես Շիրակի DMO [Shirak Tourism DMO]: Նրանց կողմից առաջարկվող զբոսաշրջային արտադրանքը ներառում է՝ մշակութային ժառանգություն, արկածային և գաստրոնոմիական զբոսաշրջություն:

Այսպիսով, Շիրակում կարող են զարգանալ զբոսաշրջության կրոնական, պատմամշակութային, քաղաքային, էկո, ագրո, ձմեռային, արկածային տեսակները:

Զբոսաշրջային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման տեսանկյունից անհրաժեշտ է անդրադառնալ նաև մարզի սոցիալ-տնտեսական վիճակին:

2022թ. Շիրակի մարզի տնտեսության հիմնական ոլորտների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են՝ արդյունաբերություն՝ 7,1%, գյուղատնտեսություն՝ 10,2%, շինարարություն՝ 4,6%, մանրածախ առևտուր՝ 3,8 %, ծառայություններ՝ 1.8 % [ՀՀ մարզերի և Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական բնութագրերը, Շիրակի մարզ, 36]: Շիրակի մարզի ՀՆԱ-ն 2021 թ. շուկայական գներով կազմել է 261518.3 մլն դրամ (ՀՀ-ի 3.74%-ը) [ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, Ազգային հաշիվներ, 32], գործազրկության մակարդակը 2022 թ. կազմել է 12.6%, զբաղվածները՝ 72.9 հազար մարդ, միջին ամսական անվանական աշխատավարձը՝ 127381 դրամ [ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, Աշխատանքի շուկա, 120-139]:

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2023 թ. ՀՀ է ժամանել 2316666 զբոսաշրջիկ՝ 2022թ. համեմատ (1665658 զբոսաշրջիկ) աճելով 39.1 տոկոսով: Զբոսաշրջիկների շուրջ 49 տոկոսը Ռուսաստանի Դաշնությունից է [ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2023թ. հունվար-դեկտեմբերին, 162-172]:

2023թ. ներքին զբոսաշրջիկների թվաքանակը կազմել է 2303610 մարդ՝ 2022թ. համեմատ (1929940 զբոսաշրջիկ) աճելով 19.4 տոկոսով [ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2024թ. հունվարին,

127]:

Պետք է նշել, սակայն, որ *չկա պաշտոնական վիճակագրություն, թե որքան են կազմել ներգնա և ներքին զբոսաշրջային այցելություններն ըստ ՀՀ մարզերի*: Ըստ ՀՀ Շիրակի մարզի զբոսաշրջության զարգացման հայեցակարգի՝ տարվա կտրվածքով մարզ այցելող զբոսաշրջիկների (այդ թվում նաև՝ ներքին զբոսաշրջիկների) մոտավոր ընդհանուր թիվը, տարբեր տվյալներով, տատանվում է 30000-35000-ի սահմաններում, որոնց բացարձակ մեծամասնությունը չի գիշերում մարզի տարածքում, այսինքն՝ բավարար գումար չի ծախսում այստեղ [ՀՀ Շիրակի մարզի զբոսաշրջության զարգացման հայեցակարգ, 2018, 30-31]:

Շիրակի մարզի ծառայությունների ծավալը ՀՀ ծառայությունների ծավալի ընդհանուր կառուցվածքում կազմում է 1,84%:

Աղյուսակ 1. Ծառայությունների ծավալը Շիրակի մարզում, մլն դրամ [ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, Առևտուր և այլ ծառայություններ, 97-98]

	2018	2019	2020	2021	2022
Ծառայությունների ծավալը, ընդամենը					
ՀՀ	1725840.2	1993439.3	1721735.5	1914936.6	2645346.8
Շիրակ	27796.6	32478.1	23946.5	29354.1	48702.5
Կացության և հանրային սննդի կազմակերպում					
ՀՀ	150901.7	194257.4	114333.8	192615.3	257940.3
Շիրակ	2400.9	2961.7	1536.5	3558.8	4922.5
Մշակույթ, զվարճություններ, հանգիստ					
ՀՀ	338451.6	420755.7	339450.8	236664.6	253586.2
Շիրակ	177.1	282.9	133.2	216.5	237.1

ՀՀ-ում վերջին տարիներին աճում է հյուրանոցային տնտեսության օբյեկտների (ՀՏՕ) և հանրային սննդի օբյեկտների թվաքանակը: 2023 թ. ՀՀ-ում եղել է 1140 ՀՏՕ, որից ընդամենը 46-ը՝ Շիրակում: 2023թ. ՀՀ-ում եղել է 3361 հանրային սննդի կազմակերպման օբյեկտ, որից 154-ը՝ Շիրակի մարզում: Զբոսաշրջային գործակալությունների թիվը ՀՀ-ում 2023 թ. կազմել է 1014, որից 26-ը՝ Շիրակի մարզում[1]:

Շիրակի մարզի զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրների վերլուծության նպատակով հարկ է իրականացնել SWOT վերլուծություն, ինչը թույլ կտա մատնանշել զբոսաշրջության զարգացման ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և սպառնալիքները:

[1] Տեղեկատվությունը տրամադրել է ՀՀ վիճակագրական կոմիտեն, 2024թ. փետրվար ամսին:

Աղյուսակ 2. Շիրակի մարզի զբոսաշրջության զարգացման SWOT վերլուծություն

Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**	**Հնարավորություններ**	**Սպառնալիքներ**
Պատմամշակութային և կրոնական հարուստ ժառանգություն	Զբոսաշրջային տուրերում ընդգրկված են շատ քիչ թվով վայրեր	Զբոսաշրջային տուրերում մարզի տարբեր վայրերի ընդգրկում և զբոսաշրջային նոր երթուղիների մշակում	Ներմարզային համայնքների միջև զարգացման անհամամասնությունն եր
Արփի լիճ ազգային պարկը իր կենսաբազմազանությամբ	Ներքին և ներգնա զբոսաշրջիկների թվաքանակի վերաբերյալ ստույգ վիճակագրության բացակայություն	Մարքեթինգային ակտիվ միջոցառումների շնորհիվ ներքին և ներգնա զբոսաշրջիկների թվաքանակի աճ	Գյուղական բնակչության աղքատություն և գործազրկություն
Գյումրին իր կոլորիտով և քաղաքային զբոսաշրջության ռեսուրսներ Գյումրիում	Զբոսաշրջային մարքեթինգի թերի իրականացում	Գյուղերում ագրոզբոսաշրջության զարգացում	Կլիմայական ռիսկեր
Ազգային համեղ խոհանոցի առկայություն	Մարզում ՀՏՕ-ների և հանրային սննդի օբյեկտների քիչ թիվ	Նոր փառատոնների կազմակերպում մարզում՝ գաստրոնոմիական, մշակութային և այլն	Բնակչության արտագաղթ
Ձմեռային զբոսաշրջության կազմակերպման բարենպաստ պայմաններ	Սպասարկման ոչ բավարար մակարդակ	Զբոսաշրջային ենթակառուցվածքի օբյեկտների ավելացում	Անբարեկարգ միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհներ
Տրանսպորտային ենթակառուցվածքի առկայություն (օդանավակայան, երկաթուղի, Հյուսիս-Հարավ ավտոմայրուղի)	Մի շարք պատմամշակութային հուշարձաններին հարող տարածքներում սպասարկող ենթակառուցվածքների բացակայություն	Զբոսաշրջության նոր տեսակների զարգացում, օրինակ՝ ստեղծարար զբոսաշրջություն, սահմանամերձ զբոսաշրջություն և այլն	Մարզում դեռևս երևում են 1988թ. երկրաշարժի հետքերը

Եզրակացություններ: Շիրակի մարզի պատմամշակութային հարուստ ժառանգության, զբոսաշրջային այլ ռեսուրսների վերլուծության հիման վրա կարելի է ասել, որ զբոսաշրջությունն ունի զարգացման էական նախադրյալներ մարզում: SWOT վերլուծության արդյունքում կարելի է մատնանշել այն հիմնական քայլերը, որոնք կնպաստեն մարզում զբոսաշրջության զարգացմանը.

- մարզում առկա են մի շարք պատմամշակութային հուշարձաններ, որոնց հիման վրա անհրաժեշտ է մշակել նոր երթուղիներ՝ ավելի շատ վայրեր ներառելով երթուղիներում,

- բարելավել ճանապարհային ենթակառուցվածքները,
- ավելացնել զբոսաշրջային ենթակառուցվածքի օբյեկտները մարզում,
- բարելավել ոլորտի վիճակագրական հաշվառումը՝ մարզում հանգրվանող ներքին և ներգնա զբոսաշրջիկների թվաքանակը, սեռատարիքային կազմը իմանալու, առկա պահանջարկը գնահատելու նպատակով,
- իրականացնել ագրոզբոսաշրջության զարգացման ծրագիր՝ գյուղական համայնքները զարգացնելու նպատակով,
- կազմակերպել տարբեր փառատոններ՝ ցույց տալով Շիրակի գաստրոնոմիական ռեսուրսը, մշակույթն ու ավանդույթները,
- կազմակերպել ստեղծարար տուրեր, որի ժամանակ զբոսաշրջիկներն ակտիվ կներգրավվեն որոշակի աշխատանքներում՝ օրինակ՝ կսովորեն պանրխաշ կամ յաղլի պատրաստել, կսովորեն դարբնագործության, կավագործության արվեստը և այլն,
- կազմակերպել ուխտագնացության երթուղիներ,
- իրականացնել ակտիվ մարքեթինգային քայլեր՝ հատկապես թվային մարքեթինգի գործիքների օգնությամբ:

Զբոսաշրջության զարգացումը կնպաստի Շիրակի մարզում ենթակառուցվածքների զարգացմանը, ներդրումների ներգրավմանը, մարզի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը, բնակչության զբաղվածության ապահովմանը, ինչպես նաև ազգային, հոգևոր-մշակութային արժեքների պահպանմանն ու արժևորմանը:

Գրականության ցանկ

Աբրահամյան Հ., 2017, Գյումրու «Յոթ Վերք» սրբապատկերի պատմությունը, «Էջմիածին», Պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, Հ. 2, էջ 91-113:

Աղասյան Ա., Հակոբյան Հ, Հասրաթյան Մ., Ղազարյան Վ., 2009, Հայ արվեստի պատմություն. Եր., 576 էջ:

Աշոցքում ստեղծվել է դահուկային սպորտի կենտրոն, http://www.armnoc.am/arm/news/3314/ashocqumstextsvel-e-dahukayin-sporti-kentron.html, դիտվել է 28.07.2024:

Ասլամազյան քույրերի պատկերասրահ, https://www.gyumriinfo.com/ , https://www.gyumriinfo.com/%D5%A1%D5%BD%D5%AC%D5%A1%D5%B4%D5%A1%D5%A6%D5%B5%D5%A1%D5%B6-%D6%84%D5%B8%D6%82%D5%B5%D6%80%D5%A5%D6%80%D5%AB-%D5%BA%D5%A1%D5%BF%D5%AF%D5%A5%D6%80%D5%A1%D5%BD%D6%80%D5%A1%D5%B0/ , դիտվել է 28.07.2024:

Ավետիսյան Ս., Գրիգորյան Վ., Թովմասյան Գ., 2021, Հայաստանի Հանրապետության մարզերի զբոսաշրջային երթուղիները: Կոլեկտիվ մենագրություն: Եր.: Հեղ. հրատ., 305 էջ:

Ավետիսյան Ս., Գրիգորյան Վ., Թովմասյան Գ., 2020, Շիրակի մարզում սահմանամերձ զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները, «Աղետի գոտուց զարգացման գոտի… անցյալի դասերը և ժամանակի մարտահրավերները»: Միջազգային գիտաժողովի նյութերի ժողվածու. Գյումրի: Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղ, էջ 37-42:

Արշավներ ակումբ տուր, https://www.facebook.com/photo?fbid=791316523096953&set=pb.100066558373932.-2207520000, դիտվել է 28.07.2024:

Արփի լիճ ազգային պարկ, https://nabu.am/hy/eco-education/arpi-lich-azgayin-park, դիտվել է 28.07.2024:

Արփի լիճ, https://www.armgeo.am/lake-arpi/, դիտվել է 28.07.2024:

Գյումրու համայնքապետարան, https://www.gyumricity.am/hy/gyumri/culture, դիտվել է 28.07.2024

Եղիազարյան Հ., 1975, Շիրակի լեռնահովտի պատմական հուշարձանները, Եր., 94 էջ:

Թովմասյան Գ., 2020, Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (մենագրություն). Երևան: Մեկնարկ ՍՊԸ, 622 էջ:

Թորամանյան Թ., 1942, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 1, Եր., 307 էջ:

Լմբատավանք (Լմպատի Վանքի Սբ Ստեփանոս Եկեղեցի), Տարեգիրք // ԵՊՀ , Աստվածաբանության ֆակուլտետ, Եր., 2017, էջ 217-224:

Հակոբյան Զ., 2016, Հայկական վաղմիջնադարյան քանդակը (4-7-րդ դարեր) // ԵՊՀ, Երևան, 170 էջ:

Հայ ժողովրդի պատմություն, ՀԽՍՀ ԳԱԱ, հ. 3, Եր., 1976, 1023 էջ:

Հայաստանի ջրամբարները, https://www.armgeo.am/armenian-reservoirs/, դիտվել է 28.07.2024

Հեծանվային երթուղիներ, https://www.google.com/maps/d/u/0/viewer?mid=1rqdYXoB4leAJ57hvP6c7Uo_h9e-kQtb1&ll=40.82619061099382%2C43.81385432158201&z=11, դիտվել է 28.07.2024:

ՀՀ կառավարության 25 սեպտեմբերի 2014 թվականի N 1059-Ա որոշումը Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=93166&fbclid=IwAR0f53ZlPVB1H-dD778KWYVPOB9gkHMPWfIzAYrEh_RCKct51pJ4VyeNfio, դիտվել է 28.07.2024:

ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, Ազգային հաշիվներ, https://www.armstat.am/file/article/marzer_2023_5.pdf, դիտվել է 28.07.2024:

ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, Աշխատանքի շուկա, https://www.armstat.am/file/article/marzer_2023_12.pdf, դիտվել է 28.07.2024:

ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, Առևտուր և այլ ծառայություններ, https://www.armstat.am/file/article/marzer_2023_10.pdf, դիտվել է 28.07.2024:

ՀՀ մարզերի և Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական բնութագրերը, Շիրակի մարզ, https://armstat.am/file/article/marzer_2023_27.pdf, դիտվել է 28.07.2024:

ՀՀ Շիրակի մարզի 30 զբոսաշրջային տարածքներ, http://shirak.mtad.am/u_files/file/30_tourism_places%20(2)(2).pdf, դիտվել է 28.07.2024:

ՀՀ Շիրակի մարզի զբոսաշրջության զարգացման հայեցակարգ, 2018թ., http://shirak.mtad.am/u_files/file/Shirak_Tourism_concept(1).pdf, դիտվել է 28.07.2024:

ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2023թ. հունվար-դեկտեմբերին, https://armstat.am/file/article/sv_12_23a_421.pdf, դիտվել է 28.07.2024:

ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2024թ. հունվարին, https://armstat.am/file/article/sv_01_24a_422.pdf, դիտվել է 28.07.2024:

ՀՀ օրենքը «Վարչատարածքային բաժանման մասին», Ընդունված է Ազգային ժողովի կողմից, 7 նոյեմբերի 1995 թ. , Ն-062-I:

Մանուկյան Մ., 2013, Հայաստանի Հանրապետության մարզերը, քաղաքներն ու գյուղերը, Եր., 1207 էջ:

Մատթեոսի Ուռհայեցւոյ ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, 373 էջ:

Մինաս Ավետիսյանի թանգարան, http://www.gallery.am/hy/ http://www.gallery.am/hy/Branches/Minas/, դիտվել է 28.07.2024:

Մհեր Մկրտչյանի թանգարան, https://mher-mkrtchyan.mus.am/am/, 28.07.2024:

Մովսես Խորենացի, 1968, Պատմություն հայոց, թարգ. և ներած. Ստ. Մալխասյանի, Եր., 552 էջ:

Նարեկավանք տուր, https://nvtour.am/?op=tours/64&l=am, դիտվել է 28.07.2024

Շիրակ երկօրյա տուր, Նարեկավանք տուր, https://nvtour.am/?op=tours/67&l=am, դիտվել է 28.07.2024

Շիրակի մարզում կայացել է «-46 °C» ձմեռային փառատոնը, https://www.informbyuro.org/post/shiraki-marzum-dzmerayin-paraton?fbclid=IwAR0KZqgvWzgidCwagdZE1w3QrCAFSDZdLBKsV76-MprpobnJ-Jij74I9ydY, դիտվել է 28.07.2024

Շիրակում նկարահանված ֆիլմերը, https://www.google.com/maps/d/u/0/viewer?mid=1hPhEeG6-ldlB6Wq_7s07h3iq11uKsF8J&ll=40.86783134255124%2C44.064543072946556&z=10, դիտվել է 28.07.2024

Պոտոսյան Ա., 2022, Հայաստանի Հանրապետության տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 546 էջ:

Քայլարշավային երթուղիներ, https://www.google.com/maps/d/u/0/viewer?mid=17aqmKzabl_goqT2Ed7j1R4PxmRnxu8fk&ll=40.828830172760924%2C43.80547372900391&z=14, դիտվել է 28.07.2024

One way tour, https://www.facebook.com/photo?fbid=735016712122053&set=pcb.735016862122038, դիտվել է 28.07.2024

Shirak Tourism DMO, **https://www.facebook.com/ShirakDMO/about**, **դիտվել է** 28.07.2024

Tovmasyan, G. (2022). Evaluating the role of tourism in the economic development of the Republic of Armenia and other member states of the Eurasian Economic Union. Journal of Liberty and International Affairs, 8(3), 83-98. https://doi.org/10.47305/JLIA2283083t

Travel Gyumri, http://travelgyumri.com/, դիտվել է 28.07.2024